

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սպանդանոցի անասնաբույժ-փորձագետի վերապատրաստման դասընթաց

Սույն թվականի հուլիսի 1-ից Հայաստանի Հանրապետությունում նախատեսվում է անցումը պարտադիր սպանդանոցային մորթի:

Այս կապակցությամբ, ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի նախաձեռնությամբ և «Ռազմավարական Զարգացման Գործակալություն» հասարակական կազմակերպության կողմից՝ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ իրականացվող «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագրի աջակցությամբ նախատեսվում է կազմակերպել սպանդանոցի անասնաբույժ-փորձագետների վերապատրաստման դասընթաց: Դասընթացի առցանց համակարգի միջոցով կազմակերպումն իրականացվում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի շնորհիվ:

Դասընթացը նպատակ է հետապնդում ապահովել վերապատրաստված մասնագետներով հուլիսի 1-ից իրենց գործունեությունը սկսող բոլոր սպանդանոցներին:

Առաջարկվող դասընթացը ներառելու է սպանդանոցի անասնաբույժ-փորձագետի գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվությունը՝ ինչպես նախասպանդային աշխատանքների ու հետազոտության, այնպես էլ հետսպանդային հետազոտության իրականացման ուղղությամբ:

Այս դասընթացի ընթացքում մասնակիցները ձեռք կբերեն համակողմանի տեսական գիտելիքներ, ինչպես նաև տեխնիկական և հաղորդակցման հմտություններ, որոնք թույլ կտան աշխատանքի ընթացքում համապատասխան մասնագիտական գործիքակազմը կիրառելով՝ ճիշտ որոշումներ կայացնել, ինչպես առօրյա գործողություններն իրականացնելու ընթացքում, այնպես էլ անկանխատեսելի իրավիճակներում:

Դասընթացն ավարտած մասնակիցներին կտրվի անասնաբույժ-փորձագետի վկայական:



Սպանդանոցներում անասնաբույժի թափուր աշխատատեղի զբաղեցման համար մասնագետի ընտրության ժամանակ առաջնահերթություն կտրվի նշված վկայականն ունեցող մասնագետներին: Սպանդանոցներում անասնաբույժ-փորձագետի աշխատանքի նկարագրությանը հնարավոր է ծանոթանալ [այստեղ](#):

Բոլոր անձինք, ովքեր ցանկանում են ձեռք բերել սպանդանոցի անասնաբույժ-փորձագետի վկայական, կարող են մասնակցության պայմաններին և գրանցման կարգին ծանոթանալ [այստեղ](#):